ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՋՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՋՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը

ՀՀ ջրային օրենսգրքի հիմնական գաղափարներից մեկը բոլոր առաջադեմ երկրների կողմից իրականացվող ջրային ռեսուրսների ջրավազանային համապարփակ կառավարման սկզբունքին անցնելն է: Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման կարևորագույն գրավականներից մեկը ջրային ռեսուրսների արդյունավետ և պատասխանատու օգտագործումն է: Հիմնվելով մեր երկրում ջրային ռեսուրսների առանձնահատկությունների, ինչպես նաև տվյալ տարածքի սոցիալ-տնտեսական զարգացման միտումների վրա, պետք է իրականացվի ջրային ռեսուրսների այնպիսի կառավարում, ինչը թույլ կտա հնարավորինս զերծ պահել դրանք հյուծման, աղտոտման և գերծանրաբեռնվածության սպառնալիքներից:

Ջրավազանային կառավարման մարմինները, որոնք համարվում են ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի (ի դեմս շրջակա միջավայրի նախարարության) անբաժանելի մաս, կհամարվեն վերը նշված կառավարման մոտեցման հիմնական շահագրգիռ օղակը: Համաձայն ՀՀ ջրային օրենսգրքի 11-րդ հոդվածի՝ Ջրավազանային կառավարման մարմիններն ապահովում են ջրային ռեսուրսների պահպանությունը, ապահովում են, որպեսզի օգտագործվող ջրային հոսքերի մակարդակը չգերազանցի ջրօգտագործման թույլտվությամբ նշված թույլատրելի սահմանը, ինչպես նաև

ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի հաստատմամբ սահմանում են ջրառի չափաքանակները, ռեժիմը, ինչպես նաև իրականացնում ու վերահսկում են ջրառի հաշվառումը: Հետևաբար, այդ մարմինների հիմնական գործառույթներից պետք է լինեն ջրային ռեսուրսների պահպանության փաստացի վիճակի մոնիթորինգի իրականացումը և դրա արդյունքում իրենց տարածքում գործող ջրօգտագործողների կողմից ապօրինի ջրօգտագործման, ինչպես նաև ջրօգտագործման թույլտվության պահանջների կամ պայմանների խախտումների վերաբերյալ ամփոփագրերի կազմումը և օրենսգրքի 117-րդ հոդվածով սահմանված ծանուցագրի հետ միասին բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին ներկայացումը: Ամփոփագիրը Տեսչական մարմնի համար հրատապ ստուգում իրականացնելու, ինչպես նաև իր լիազորությունների շրջանակներում իրավախախտման վերաբերյալ գործի քննման, տույժերի նշանակման գործընթացն իրականացնելու հիմք կհանդիսանա, ինչը կնպաստի ապօրինի ջրօգտագործման կանխմանը և ջրային ռեսուրսի պահպանմանը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տարիների ընթացքում նկատվում է ջրային ռեսուրսի պաշարների նվազեցման միտում: Մասնավորապես՝ Արարատյան դաշտում ձկնաբուծության արագընթաց զարգացումն հանգեցրել է արտեզյան ստորերկրյա ջրային ռեսուրսների մակարդակի (ջրատար հորիզոններ) անկման՝ պայմանավորված Արարատյան դաշտի ստորերկրյա ջրերի գերշահագործումով:

Ուստի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման և պահպանության համար անհրաժեշտ է հստակ պատկերացում ունենալ ձևավորվող ջրառաջարկի և փաստացի ջրապահանջարկի վերաբերյալ՝ որպես արդյունավետ կառավարման գործիք ճշգրիտ կիրառելով ջրօգտագործման թույլտվությունները և կառավարումն իրականացնելով ջրավազանային տարածքների կառավարման պլաններին համապատասխան: Ջրօգտագործման թույլտվությունները ջրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումն ապահովող հիմնական իրավական գործիքն են: Հենց այդ իրավասահմանող փաստաթուղթն է օրենքով նախատեսված պահանջները հասցեագրում կոնկրետ ջրօգտագործողին՝ նրա համար ստեղծելով իրավունքների և պարտականությունների հստակ

շրջանակ: Այդ իսկ պատճառով ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման գործընթացը պետք է լինի ճկուն, վերահսկելի, կառավարելի և թույլտվություն տրամադրող լիազոր մարմնին հնարավորություններ ընձեռի ժամանակ առ ժամանակ վերանայելու նախկինում տրված ջրօգտագործման թույլտվությունները՝ բնակլիմայական, սոցիալ-տնտեսական նոր պայմաններին և այդ պայմանների փոփոխության արդյունքում ձևավորված ջրառաջարկին համապատասխան:

Ջրառաջարկը ձևավորվում է հիմնականում հիմք ընդունելով հիդրոդերևութաբանական ցուցանիշները՝ դրան գումարելով փաստացի ջրօգտագործման տվյալները, որի հաշվառման հիմնական մեխանիզմներից է ջրառի կետում ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի տեղադրումը: Դա անհրաժեշտ է, որպեսզի իրականացվի ջրային ռեսուրսի հավասարաչափ բաշխում՝ ըստ գերակայությունների և տնտեսական ոլորտների՝ ապահովելով ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումը: Իսկ ջրային ռեսուրսների լիարժեք պահպանությունն ապահովելու համար կարևոր և անհրաժեշտ է էկոլոգիական թողքի փաստացի հաշվառումը էկոթողքի կետում տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի տեղակայման միջոցով՝ ապահովելով էկոլոգիական թողքի փաստացի համապատասխանությունը ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված էկոլոգիական թողքի չափաքանակին:

Նախագծով առաջարկվող ՀՀ ջրային օրենսգրքի լրացումներն ու փոփոխությունները, ինչպես նաև «Ջրի ազգային ծրագրի մասին» և «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքների փոփոխությունները և լրացումները նպատակ ունեն նաև իրականացնելու 2017թ. նոյեմբերի 24-ին ստորագրված և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2018թ. ապրիլի 11-ին վավերացված Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԳՀՄ) կիրարկման նպատակով հաստատված ճանապարհային քարտեզը, ինչպես նաև կարգավորել ջրային ռեսուրսների կառավարման արդի պայմանների որոշ առանձնահատկություններ:

Ջրի որակի և պաշարների կառավարման վերաբերյալ ՀԳՀՄ կիրարկման ճանապարհային քարտեզը ներառում է ջրային քաղաքականության ոլորտում Համայնքի գործողությունների շրջանակը սահմանող Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2000 թվականի հոկտեմբերի 23-ի 2000/60/EC Ջրի շրջանակային դիրեկտիվի, Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2007թ. հոկտեմբերի 23-ի 2007/60/ԵՀ հեղեղումների ռիսկերի գնահատման և կառավարման մասին դիրեկտիվի, Խորհրդի 1991թ. մայիսի 21-ի 91/271/ԵՏՀ քաղաքային կեղտաջրերի մաքրման մասին դիրեկտիվի, Խորհրդի 2998 թվականի նոյեմբերի 3-ի 98/83/ԵՀ մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի որակի մասին կանոնակարգի, Խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 12-ի 91/676/ԵՏՀ գյուղատնտեսական աղբյուրներից արտանետվող նիտրատների հետևանքով առաջացող աղտոտման դեմ ջրերի պաշտպանության վերաբերյալ դիրեկտիվի դրույթների մոտարկումը:

Ուսումասիրությունները փաստում են, որ ջրօգտագործման ոլորտում առկա են ապօրինություններ, որոնց կանխարգելման և վերացման համար անհրաժեշտություն է առաջացել ջրօգտագործման բնագավառում բարձրացնել վարչական տույժի չափերը՝ տեղ գտած ապօրինությունների համար իրատեսական չափերի տուգանքների սահմանմամբ:

Ըստ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ ստորև ներկայացվում է 2015-2018թթ. ջրային պաշարների ոլորտում հայտնաբերված խախտումները.

Հ/Հ	Ըստտարիների	Հայտնաբերվածխախտումներիքանակը
1.	2015	41
2.	2016	19
3.	2017	3
4.	2018	36

Վերը նշված աղյուսակում 2016թ և 2017թ. Ցուցանիշների նվազումը պայմանավորված է տեսչական բարեփոխումների գործընթացի հետ, որի ընթացքում տեսչական սպուգումները կասեցված էին և այդ ցուցանիշները չեն արտացոլում իրական պատկերը:

Աղյուսակում ներառված ցուցանիշների համեմատությունը փաստում է, որ խախտումների քանակը էական փոփոխության չի ենթարկվել: Գործող վարչական տույժի չափերը կանխարգելիչ ազդեցություն չեն ունեցել խախտման իրականացման համար:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխությունների կատարումը կրում է կանխարգելիչ բնույթ նոր իրավախախտման իրականացման կամ նույնի կրկնության նկատմամբ: Ջրօգտագործողները խուսափելով տուգանքի մեծ չափերից՝ աստիճանաբար կսկսեն գործել օրինական դաշտում, ինչպես նաև իրենց գործունեությունը կծավալեն ջրօգտագործման թույլտվությանը համապատասխան:

Վերջին շրջանում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բազմաթիվ ջրօգտագործողների մոտ բացակայում են ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերը՝ ինչը հակասում է ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված պահանջներին և հանգեցնում է ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված ջրօգտագործման ծավալներից ավել օգտագործմանը: Դա, իր հերթին, բերում է ջրային ռեսուրսի հյուծմանն ու էկոհամակարգի, իր ողջ կենսաբազմազանությամբ, դեգրադացմանը կամ վերացմանը:

Որպեսզի պատժամիջոցների չափերի համարժեքությունը պահպանվի՝ անհրաժեշտ է փոփոխության ենթարկել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 63[2]-րդ հոդվածը՝ համամասնորեն ավելացնելով պատժամիջոցների չափերը ջրառի, ջրթափի և/կամ էկոլոգիական թողքի կետերում ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի տեղադրման պահանջների չկատարելու դեպքում:

ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն հիդրոէլեկտրակայանները չեն հանդիսանում ջրօգտագործող՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ ջրօգտագործման արդյունքում օգտագործված ջուրը կրկին վերադարձվում է ջրային ռեսուրս: Սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հիդրոէլեկտրակայանների շինարարությունը էական վնաս է հասցնում գետային էկոհամակարգերին՝ հանգեցնելով ճգնաժամային վիճակի: Պատվարների, դերիվացիոն խողովակների կառուցումն առաջացնում է բնական ջրահոսքի խոչընդոտում և շեղում, ջրային ռեսուրսի ափերի, հոսքի և հատկությունների, ինչպես նաև ջրի քանակական փոփոխություններ: Համաձայն ՀՀ ջրային օրենսգրքի 1-ին

հոդվածի՝ *ջրօգտագործում է համարվում* ջրային ռեսուրսից ջուր վերցնելը, այդ թվում՝ ստորերկրյա քաղցրահամ ջուր արդյունահանելը կամ այլ եղանակով նվազեցնելը, ջրի կուտակումը, ջրային հոսքի խոչընդոտումը կամ շեղումը, ջրային ռեսուրսի աղտոտումը, ջրային ռեսուրսի մեջ կեղտաջրերի արտանետումը, վնասակար նյութերի կուտակումն այնպիսի եղանակով, որը կարող է վնասակար ազդեցություն ունենալ ջրային ռեսուրսի վրա, ինչպես նաև ջրային ռեսուրսի հատակների, ափերի, հոսքի կամ հատկությունների փոփոխումը: Հետևաբար հիդրոէլեկտրակայանները չեն կարող չհամարվել ջրօգտագործող և ազատվել բնօգտագործման վճարից: Վերլուծությունն ու հաշվարկները փաստում են, որ 2017-2019թթ.-ին հիդրոէլեկտրակայանների կողմից օգտագործված ջրի ծավալը միջինում կազմել է 6,2 մլրդ մ^3: Հետևաբար սահմանված դրույքաչափով բնօգտագործման վճարներից պետբյուջեի մուտքերը տարեկան կավելանան մոտավոր 620 մլն դրամով:

Միաժամանակ, ՀՀ հարկային օրենսգրքով պարտադիր պահանջ է սահմանված միայն ստորերկրյա ջրերի օգտագործված պաշարների հաշվառման համար: Համաձայն ՀՀ ջրային օրենսգրքի 32-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր ջրօգտագործման թույլտվություն պետք է ներառի համապատասխան պահանջներ ջրօգտագործման հաշվառման, մոնիտորինգի, գրանցման և ճշգրտման համար, իսկ 37-րդ հոդվածի համաձայն՝ ջուրը պետք է վերցվի և օգտագործվի միայն ջրօգտագործման թույլտվության մեջ նշված նպատակներով և չպետք է գերազանցի արդյունավետ օգտագործման համար Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի հիմնավորած և սահմանած չափաքանակները: Ուստի ջրօգտագործման պաշարների հաշվառումն օրենսդրական պարտադիր պահանջ է, որը հավասարաչափ վերաբերվում է ինչպես ստորերկրյա, այնպես էլ մակերևութային ջրերին: Վերոնշյալ խնդիրները կարգավորելու նպատակով մշակվել է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որի ընդունումը կնպաստի հէկերի կողմից ջրօգտագործման համար վճարելու արդարացի պահանջի, ինչպես նաև մակերևութային ջրերի օգտագործված պաշարների հաշվառման պատշաճ իրականացմանը:

Համաձայն ՀՀ ջրային օրենսգրքի՝ ցանկացած տեսակի ջրօգտագործման համար յուրաքանչյուր ոք պարտավոր է ստանալ ջրօգտագործման թույլտվություն, որը տրվում է դիմողի հայտի հիման վրա: Հայտին կից ներկայացվող փաստաթղթերով պահանջվում են ջրօգտագործման նորմաներ, որոնց հաշվարկներն իրականացնող անձինք ոչ միշտ են գործում օրինական դաշտում: Այդ կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի գործունեությունն օրինականացնելու և մատուցած ծառայությունների դիմաց գանձվող գումարներից պետական բյուջե օրենքով սահմանված կարգով վճարումներ իրականացվելու նպատակով մշակվել է «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը, որի նպատակն է ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման համար պահանջվող ջրօգտագործման և ջրահեռացման, ինչպես նաև թույլատրելի սահմանային արտահոսքի նորմաների հաշվարկման գործունեությամբ զբաղվելու իրավունք ստանալու համար ծանուցել և հաշվառվել Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության լիազոր մարմնի կողմից՝ վճարելով պետական տուրք օրենքով սահմանված չափով:

ՀՀ ջրային օրենսգիրքը ընդունվել է 2002 թվականին, մինչ օրս ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման գործընթացը բազմիցս փոփոխվել է և ներկայումս ջրօգտագործման թույլտվության տրամադրման համար նախկինում նախատեսված օրերի թիվը կրճատվել է և օրենսգրքով սահմանվել 50 աշխատանքային օր՝ ավելացնելով իրականացվող աշխատանքի ծավալն ու աշխատանքը իրականացնողների ծանրաբեռնվածությունը: Հաշվի առնելով, որ ջրօգտագործման թույլտվության համար վճարի սահմանման հիմք է հանդիսանում նաև մատուցված ծառայությունների, կատարված աշխատանքների ծավալը, որն իրականացվել է առանց ջրային ռեսուրսից ջուր վերցնելու, ուստի ջրօգտագործման թույլտվության ձեռքբերման համար վճարվող պետական տուրքի չափը պետք է ներառի նաև կատարված աշխատանքների ամբողջ ծավալը: Նաև համաձայն ջրային օրենսդրության՝ ջրօգտագործման թույլտվության ձեռքբերման համար հայտատուն հայտին կից ներկայացնում է պահանջվող փաստաթղթեր: Ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման թույլտվություն ստանալու համար պահանջվում է նաև հորատանցքի

նախագծային երկրաբանատեխնիկական կտրվածքը, հորատանցքի անձնագիրը, բնաղբյուրի դեպքում՝ բնաղբյուրի անձնագիրը: Նշված հիդրոերկրաբանական տեղեկատվությունը հայտատուն ձեռք է բերում անձամբ՝ մատուցված ծառայության համար վճարելով համապատասխան գումար: Հայտատուին լրացուցիչ վարչարարությունից զերծ պահելու նպատակով, ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման թույլտվություն ստանալու դեպքում պահանջվող հիդրոերկրաբանական տեղեկատվության ձեռք բերումը կիրականացնի Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինը և ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման թույլտվության ձեռքբերման համար վճարվող պետական տուրքի չափը կներառի նաև վերոնշյալ մատուցված ծառայության, կատարված աշխատանքների ծավալը: Միաժամանակ, Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինը ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման համար պահանջվող ջրօգտագործման և ջրահեռացման, ինչպես նաև թույլատրելի սահմանային արտահոսքի նորմաների հաշվարկման գործունեությունն օրինականացնելու նպատակով նախատեսում է այն դարձնել ծանուցման ենթակա գործունեության տեսակ: Համաձայն «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքի՝ ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու համար նախատեսվում է պետական տուրք: Ելնելով վերոգրյալից մշակվել է «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Ջրի շրջանակային դիրեկտիվի սկզբունքներին և մոտեցումներին համահունչ մոտարկման, առկա ոլորտային խնդիրների իրավակարգավորման նպատակով «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով՝

- սահմանվել են նոր հասկացություններ, մասնավորապես՝ մակերևութային ջրային մարմին, ստորերկրյա ջրային մարմին, խիստ փոփոխված ջրային մարմին, ջրային ռեսուրսի ինքնամաքրում, կլիմայի փոփոխության նկատմամբ ջրային ռեսուրսների խոցելիություն և հարմարվողականություն և այլ հասկացություններ.

- ամրագրվել է մակերևութային ջրերի որակի հինգ կարգավիճակներ՝ «ջրային մարմնի գերազանց կարգավիճակ», «ջրային մարմնի լավ կարգավիճակ», «ջրային մարմնի միջակ կարգավիճակ», «ջրային մարմնի վատ կարգավիճակ», «ջրային մարմնի ցածր կարգավիճակ»՝ կախված ջրային մարմնի ֆիզիկաքիմիական, հիդրոմորֆոլոգիական և կենսաբանական բնութագրիչներից.

- ամրագրվել են դրույթներ՝ ջրի գերազանց և լավ վիճակի պահպանման վերաբերյալ, համաձայն որի պետք է ձեռնարկվեն միջոցներ գերազանց կամ լավ վիճակում գտնվող մակերևութային ջրային ռեսուրսը պահպանելու համար.

- փոփոխությունները նախատեսում են պահանջներ՝ ստորերկրյա ջրային մարմինների որակի վերաբերյալ, տարանջատվել են ստորերկրյա ջրային մարմինների լավ և վատ կարգավիճակ.

- կանոնակարգվել են ազատ ջրօգտագործման, ջրօգտագործման թույլտվության վերանայման հետ կապված իրավահարաբերությունները.

- հստակեցվել են ջրօգտագործման թույլտվության 3 տարի անընդմեջ չօգտագործման օրինական հիմքերը, առանց որոնց առկայության ջրօգտագործման թույլտվությունը համարվում է ուժը կորցրած.

- ամրագրվել է էկոլոգիական թողքի հաշվառման (տվյալների առցանց փոխանցմամբ հոսքաչափական սարքավորումների տեղադրման) պահանջ.

- նախատեսվել է արգելք Արարատյան դաշտում (Արարատի և Արմավիրի մարզեր) նոր հորատանցքերի միջոցով, իսկ ձկնաբուծական նպատակներով նաև գործող հորատանցքերի միջոցով նոր ջրօգտագործման թույլտվությունների տրամադրումը, եթե ջրավազանային կառավարման պլաններով այլ բան նախատեսված չէ:

- Արարատյան դաշտի արտեզյան ջրավազանի վիճակի վերականգնման, ինչպես նաև չշահագործվող հորատանցքերի լուծարման, կոնսերվացման գործընթացների պատշաճ իրականացման նպատակով առաջարկվել է ստեղծել Ջրային ռեսուրսների պահպանության դրամագլուխ, և ջրային օրենսգրքով սահմանել դրույթներ, համաձայն որոնց տնտեսվարողը պարտավոր կլինի ջրօգտագործման թույլտվության ստացման հայտին կից ներկայացնել

համապատասխան ֆինանսական երաշխիքներ՝ ջրային ռեսուրսների պահպանության դրամագլուխ փոխանցված գումարի տեսքով, հետագայում դրանք չշահագործելու պարագայում պետության կողմից այդ հորերի լուծարման կամ կոնսերվացման գործընթացը կազմակերպելու ուղղությամբ:

- նախատեսվել է ունենալ հեղեղումների վտանգների և հեղեղումների առաջացման ռիսկերի քարտեզներ.

- նախատեսվել են իրավական հիմքեր «Ջրային ռեսուրսների ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման հաստատման և գետի ինքնամաքրման կարողության գնահատման մեթոդի և կիրարկման մեխանիզմների սահմանման համար,

- ամրագրվել է ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիություն ապահովելու սկզբունքը, որը կապահովի հավասար հասանելիություն անձանց, այդ թվում այդ ծառայությունների հավասար հասանելիության ապահովման տեսանկյունից խոցելի և մեկուսացված խմբերում ներառված անձանց համար:

- ամրագրվել է հորատանցքի միջոցով ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործում իրականացնող ձկնաբուծարաններում գործունեությունը փակ շրջանառու համակարգով իրականացնելու պարտադիր պահանջ.

- ամրագրվել են արտադրական կեղտաջրերի արտանետման պահանջներին և կեղտաջրի նստվածքի ու տիղմի կառավարման գործընթացին ուղղված կարգավորումներ:

«Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» օրենքի նախագիծը նախատեսում է առնվազն վեց տարին մեկ անգամ նախատեսել ջրային ռեսուրսների գնահատման իրականացում նաև ըստ ջրային մարմինների որակի կարգավիճակների, նաև նախագծով նախատեսվում է կարգավորել ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության գերկայությունները:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունմամբ կկարգավորվի

ապօրինի ջրօգտագործումը և ջրօգտագործման թույլտվությամբ տրված պայմանների խախտմամբ ջրառը:

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվել է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 204-րդ հոդվածում բնօգտագործման վճարի դրույքաչափ նախատեսել նաև հիդրոէներգետիկ նպատակով մակերևութային ջրերի օգտագործման համար, իսկ 212-րդ հոդվածով նախատեսել մակերևութային ջրերի օգտագործված պաշարների հաշվառման նպատակով ջրառի իրականացման կետում տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի տեղադրման պահանջ:

«Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվել է «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի «3.1. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ» բաժինը լրացնել 2-րդ կետով, համաձայն որի ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման համար պահանջվող ջրօգտագործման և ջրահեռացման, ինչպես նաև թույլատրելի սահմանային արտահոսքի նորմաների հաշվարկման գործունեությունը կդասվի ծանուցման ենթակա գործունեությունների շարքին:

«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով վերանայվել են ջրօգտագործման թույլտվությունների ձեռքբերման համար նախատեսված պետական տուրքերի դրույքաչափերը, տարանջատվել են մակերևութային և ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման թույլտվությունների ձեռքբերման համար նախատեսված պետական տուրքերի դրույքաչափերը՝ հաշվի առնելով ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման թույլտվություն ստանալու դեպքում պահանջվող հիդրոերկրաբանական տեղեկատվության ձեռքբերման համար իրականացվող աշխատանքների ծավալը: Ինչպես նաև ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման համար պահանջվող ջրօգտագործման նորմաների հաշվարկման գործունեությամբ զբաղվելու համար սահմանվել է պետական տուրք, որի չափը որոշվել է ելնելով տվյալ

իրավունքի տրամադրման համար պետական լիազոր մարմնի կողմից կատարվելիք ծախսերի չափից՝ հիմք ընդունելով ծանուցման ենթակա ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունքի տրամադրման համար լիազոր մարմնի կողմից կատարվող համանման ծախսերը:

3. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք և նրանց դիրքորոշումը

Նախագծերը մշակվել են շրջակա միջավայրի նախարարության, «ԵՄ ջրային նախաձեռնություն+» ծրագրի և ՄԱԿ-ի ՄԱԶԾ կլիմայի փոփոխության ծրագրերի փորձագետների կողմից:

4. Ակնկալվող արդյունքը

«Ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը հետամուտ է ջրային ռեսուրսների կառավարման համապատասխան մեխանիզմների ստեղծման միջոցով ազգային ջրային պաշարի պահպանմանը, օգտագործելի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով անհրաժեշտ քանակի և որակի ջրով քաղաքացիների և տնտեսության պահանջների բավարարմանը, մակերևութային և ստորերկրյա ջրային մարմինների կարգավիճակի վատթարացման կանխմանը, խիստ փոփոխված ջրային մարմինների կարգավիճակի բարելավմանն ու վերականգնմանը, շրջակա միջավայրի էկոլոգիական կայունության ապահովմանը, ինչպես նաև սույն օրենսգրքի խնդիրների լուծման համար իրավական հիմքերի ապահովմանը: «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի ընդունմամբ ևս ակնկալվում է ապահովել ՀԳՀՄ ջրի որակի և պաշարների կառավարման ոլորտում մոտարկման ենթակա ճանապարհային քարտեզի իրականացումը, ջրերի լավ որակը և պաշարների արդյունավետ կառավարումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունման արդյունքում

ակնկալվում է, որ պատժամիջոցի չափի բարձրացումը կապահովի ջրօգտագործողների կողմից ջրային ռեսուրսի խնայողաբար օգտագործմանը և կհանգեցնի ջրօգտագործման թույլտվության պահանջների լիարժեք կատարմանը:

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունման արդյունքում կապահովվի հիդրոէլեկտրակայանների կողմից ջրօգտագործման համար վճարելու արդարացի պահանջը, կավելանան պետբյուջեի եկամուտները, կիրականացվի մակերևութային ջրերի օգտագործված պաշարների պատշաճ հաշվառում և ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարում:

«Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունմամբ կկանոնակարգվի ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման գործընթացը, կապահովվի ջրօգտագործման թույլտվությունների ստացման նպատակով ներկայացվող փաստաթղթերի օրինականությունը և հաշվարկների իրականացման համար պետականորեն նախատեսված վճարումներ կատարելու իրավական պահանջը:

«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունմամբ կթեթևացվի ջրօգտագործման թույլտվության ձեռքբերման ժամանակ ջրօգտագործողի վարչարարական բեռը, իսկ ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման համար պահանջվող ջրօգտագործման և ջրահեռացման, ինչպես նաև թույլատրելի սահմանային արտահոսքի նորմաների հաշվարկման գործունեության իրականացման իրավունք ձեռք բերելու համար կսահմանվի պետական տուրք՝ ապահովելով նշված գործունեության իրականացման օրինականության սկզբունքը և պետական բյուջեի եկամուտներում ավելացում:

<u>5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ.</u>

«Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակումը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների ծրագրի մասին» N 1363-Ա որոշմամբ

հաստատված Հավելվածի «4.10 Շրջակա միջավայրի պահպանություն» բաժնի միջոցառումներից և ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված հավելված 1-ի «Շրջակա միջավայրի նախարարություն» բաժի 1.5-րդ կետից:

«Ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը հետամուտ է ջրային ռեսուրսների կառավարման համապատասխան մեխանիզմների ստեղծման միջոցով ազգային ջրային պաշարի պահպանմանը, օգտագործելի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով անհրաժեշտ քանակի և որակի ջրով քաղաքացիների և տնտեսության պահանջների բավարարմանը, մակերևութային և ստորերկրյա ջրային մարմինների կարգավիճակի վատթարացման կանխմանը, խիստ փոփոխված ջրային մարմինների կարգավիճակի բարելավմանն ու վերականգնմանը, շրջակա միջավայրի էկոլոգիական կայունության ապահովմանը, ինչպես նաև սույն օրենսգրքի խնդիրների լուծման համար իրավական հիմքերի ապահովմանը: Վերոնշյա նախագծի, ինչպես նաև «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի ընդունմամբ ակնկալվում է ապահովել ՀԳՀՄ ջրի որակի և պաշարների կառավարման ոլորտում մոտարկման ենթակա ճանապարհային քարտեզի իրականացումը, ջրերի լավ որակը և պաշարների արդյունավետ կառավարումը:

«Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Գործունեության իրականացման ծանուցման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը ռազմավարական փաստաթղթերից չեն բխում: